“Արցախ ՀԷԿ”-ի տարեկան ընդհանուր ժողովի արդյունքները:

Ս.թ. ապրիլի 27-ին ԼՂՀ Ստեփանակերտ քաղաքում տեղի ունեցավ <<Արցախ ՀԷԿ>> ԲԲԸ-ի բաժնետոմսերի հանրային առաջարկից հետո անդրանիկ տարեկան ընդհանուր ժողովը: Օրակարգում Տնօրենների խորհրդի կողմից ընդգրկված էր թվով 12 հարց, այդ թվում՝ Տնօրենների խորհրդի անդամների ընտրության, 2009թ. տարեկան հաշվետվությունների հաստատման, շահույթի բաշխման և շահաբաժինների չափի ու վճարման կարգի հաստատման, նոր խմբագրությամբ կանոնադրության հաստատման, ինչպես նաև ընկերության կորպորատիվ կառավարման ոլորտը կարգավորող հաստատման ենթակա ներքին մի քանի կանոնակարգերի քննարկման վերաբերյալ հարցերը:

Ժողովի ընթացքում ընկերության Գլխավոր տնօրեն Վահրամ Բեգլարյանը ներկայացրեց 2009-2010թթ. տեղի ունեցած ընկերության հետ կապված առավել հիշարժան իրադարձությունները, մասնավորապես, բաժնետոմսերի առաջնային հրապարակային առաջարկի իրականացումը, <<Նասդաք Օէմէքս Արմենիա>> ֆոնդային բորսայի Բ հարթակում բաժնետոմսերի ցուցակումը, <<ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ>> ՓԲԸ-ի կողմից ընկերության բաժնետոմսերի պարտադիր երկկողմանի գնանշումների կազմակերպումը և <<Թրղի-1>> ՀԷԿ-ի շահագործումը: Տեղեկացրեց, որ տարեվերջին շահագործման կհանձնվի նաև <<Թրղի-2>> հիդրոէլեկտրակայանը, իսկ 2011թ. պլանավորվում է ավարտել <<Մադաղիս-1>> և <<Մադաղիս-2>> հիդրոկայանների շինարարական աշխատանքները ու շարունակել <<Թրղի-3>> ՀԷԿ-ի շինարարությունը: Տնօրենների խորհրդի կողմից առանձնակի հետաքրքրությամբ քննարկվեցին Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին առաջարկված շահույթի բաշխման վերաբերալ հարցը, դրա համամասնությունները մեկ բաժնետոմսի անվանական արժեքի նկատմամբ՝ 10% տարեկան եկամտաբերության հաշվարկով կամ 596 207 400 (հինգ հարյուր իննսունվեց միլիոն երկու հարյուր յոթ հազար չորս հարյուր) ՀՀ դրամ ծավալով:

Օրակարգում ընդգրկված հարցերի քննարկման ավարտից հետո <<ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ>> ՓԲԸ-ի Կորպորատիվ ֆինանսների բաժնի պետ Արկադի Փինաչյանը բաժնետերերին ներկայացրեց <<Բաժնետերերի իրավունքները և դրանց իրականացման մեխանիզմները <<Արցախ ՀԷԿ>> ԲԲԸ-ում>> թեմայով զեկույցը:

Եզրափակելով Ժողովը՝ Հաշվիչ հանձնաժողովը նշեց որ 5 օրվա ընթացքում կամփոփի քվեարկության արդյունքները և վերջնական տվյալները կհրապարակվեն ընկերության էլեկտրոնային կայքում՝ 15 օրվա ընթացքում: